

## Ջերմ Օջախ “ Միկրո ”

Ազգային Հիփոթեքային Ընկերություն / ԱՀԸ / ՈԻՎԿ ՓԲԸ - ի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում բնակելի անշարժ գույքի էներգաարդյունավետության բարձրացման համար նախատեսված նյութերի / պարագաների ձեռքբերման համար տրամադրվող վարկ

<b>Նպատակային նշանակությունը</b>	Բազմաբնակարան շենքի բնակարանի կամ բնակելի տան էներգաարդյունավետության բարձրացման համար նախատեսված նյութերի/ պարագաների ձեռքբերման համար:	
<b>Հնարավոր վարկառուները և համավարկառուները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• կայուն եկամուտ ունեցող ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ ֆիզիկական անձինք</li> <li>• տարիքային սահմանափակում՝ 22-60 տարեկան</li> <li>• բացասական վարկային պատմության բացակայություն</li> </ul>	
<b>Վարկի նվազագույն և առավելագույն գումարը</b>	A /բացառությամբ՝ Կենտրոն համայնքի/	B
	500,000 – 2,000,000 ՀՀ դրամ	500,000 – 1,000,000 ՀՀ դրամ
<b>Վարկի արժույթը</b>	ՀՀ դրամ	
<b>Վարկի նվազագույն ժամկետը</b>	24 ամիս	
<b>Վարկի առավելագույն ժամկետը</b>	60 ամիս	
<b>Տարեկան անվանական տոկոսադրույքը</b>	12.7%	
<b>Փաստացի տոկոսադրույքը</b>	14.14%- 14.82%	
<p>Ուշադրություն՝ վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում եւ չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել <a href="#">այստեղ</a>: Վարկային պայմանագրի գործողության ընթացքում Բանկի կողմից անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում, եթե վարկառուն չի խախտում պայմանագրով սահմանված պայմանները:</p> <p>Ուշադրություն՝ Այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել բանկի կողմից վարկային պայմանագրի գործողության ընթացքում, եթե վարկառուն խախտի պայմանագրով սահմանված պայմանները:</p> <p>Փոփոխման սահմանաչափերն են՝ 1-5%</p>		
<b>Պարտադիր վճարման ենթակա վճարներ</b>	Միանվագ միջնորդավճար՝ 5000-20000 ՀՀ դրամ	
<b>Վարկի տրամադրման կարգը</b>	Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:	
<b>Վարկի մարման կարգը</b>	Վարկի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված՝ 6-12 ամիս: Արտոնյալ ժամանակահատվածում՝ միայն տոկոսագումարների	

	մարում: Արտոնյալ ժամանակահատվածի ավարտից հետո՝ ամբողջությամբ վճարվող մայր գումարի հավասարաչափ մարումներ:	
<b>Վաղաժամկետ մարման հնարավորությունը</b>	Թույլատրվում է առանց սահմանափակման:	
<b>Տույժեր</b>	Ժամկետանց վարկ	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով:
	Ժամկետանց տոկոս	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով:
<p><i>Զգուշացում՝ Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր տոկոսագումարների և վարկի գումարների մարումները:</i></p> <p><i>Ուշադրություն՝ Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու համար:</i></p> <p><i>Վարկային պարտավորությունների չկատարման եւ գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում, վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու պարագայում, հնարավոր է պատավորությունների մարում վարկառուի այլ գույքի հաշվին:</i></p>		
<b>Ապահովվածություն</b>	<p>Երրորդ անձի երաշխավորություն՝</p> <p>Որպես երաշխավոր կարող է հանդես գալ ֆիզիկական անձը, որը պետք է ունենա կայուն հիմնավորված եկամուտ:</p> <p>Երաշխավորը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• չի կարող միաժամանակ հանդես գալ որպես համավարկառու,</li> <li>• չպետք է ունենա խնդրահարույց պարտավորություններ վարկ տրամադրելու պահին,</li> <li>• Վարկի տրամադրման պահին կարող է ունենալ առավելագույնը 2 գործող երաշխավորություն՝ տրամադրված այլ անձանց պարտավորությունների դիմաց:</li> </ul> <p>Երաշխավորի վերաբերյալ պարտադիր է վարկային գեկույցի առկայությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից: Երաշխավորը չի կարող լինել վարկառուի ընտանիքի անդամ:</p>	
<b>Ապահովագրությունը</b>	Անձնական (դժբախտ պատահարներից) 0.17 % վարկի գումարից	
Սպառողի համար վարկի հասանելիությունը սահմանափակող այլ պայմաններ չկան: Վարկը		

ձևակերպվում է բանկում՝ մասնաձյուղերում:

Վարկի տրամադրման դրական գործոններն են հաճախորդի վարկունակությունը, դրական վարկային պատմության առկայությունը, գրավի առարկայի որակը և այլն:

Վարկի մերժման գործոններն են հաճախորդի եկամուտների անբավարար լինելը, բացասական վարկային պատմության առկայությունը, ներկայացված տեղեկատվության կամ փաստաթղթային փաթեթի թերի կամ անարժանահավատ լինելը և այլն:

Պայմանագրի գործողության ընթացքում քաղվացքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները տես [«Սակագներ»](#) բաժնում: